Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 289- Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՔԱՂՑԿԵՂ ԵՎ ԱՐՅԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ»

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է անհատույց կերպով աջակցել քաղցկեղ և արյան հիվանդություններ ունեցող, ՀՀ-ում բուժվող մինչև 25 տարեկան ֆիզիկական անձանց:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Բարեգործական որակման նպատակն է օգտվել ՀՀ օրենքով սահմանված հարկային արտոնություններից:
3.	Բարեգործը	«Սիթի օֆ սմայլ բարեգործական» հիմնադրամ
4.	Ծրագիրը կատարողը	Սույն ծրագիրն իրականացվում է Սիթի օֆ Սմայլ բարեգործական հիմնադրամի կողմից Հասցե՝ Ք. Երևան, Ներսիսյան 7 Հեռ:՝ 00 374 91 403 927 00 374 10 283 800 e-mail: info@cityofsmile.org ՀՎՀՀ՝ 00464744
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հիմնադրամի գործունեության հասցեն է ՀՀ, քաղ. Երևան, Ներսիսյան 7, բարեգործական ծրագրի բնագավառն է՝ առողջապահական:
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի բյուջեն կազմում է՝ 111,510,772 դրամ
7.	Բարեգործությունն ստացողը	Ծրագրի շահառուներն են քաղցկեղ և արյան հիվանդություններ ունեցող մինչև 25 տարեկան ՀՀ-ում բուժվող ֆիզիկական անձինք, ովքեր հանդիսանում են «Սիթի օֆ Սմայլ» բարեգործական հիմնադրամի շահառուներ, այդ թվում սակավ ապահովված ընտանիքներ, որոնք չեն կարող ինքնուրույն ապահովել իրենց բուժման ծախսերը:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագրի տևողությունն է 01.04.2023 թ.-ից մինչև 31.12.2024 թ.

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագիրում ներկայացված հաշվարկներն ընդգրկում են 01.04.2023 թ.-ից մինչև 31.12.2024 թ. ընկած ժամանակահատվածը: Նախատեսվում է իրականացնել դեղորայքային աջակցության միջոցառումներ քաղցկեղ և արյան հիվանդություններ ունեցող, ՀՀ-ում բուժվող մինչև 25 տարեկան ֆիզիկական անձանց: Տվյալ ծրագիրն իրականացնելու համար նախատեսվում ծախսել 104,027,438 դրամ դեղորայքի և 7,483,333 դրամ ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերի համար, որից 6,300,000 դրամը հաշվապահական հաշվառման ծառայության ծախս, իսկ 1,183,333 դրամը ինկասացիոն ծառայության ծախս:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Հիմնադրամը ՀՀ տարածքում 01.04.2023 թ.-31.12.2024 թ. ընկած ժամանակահատվածում նախատեսում է ձեռք բերել դեղորայք՝ 104,027,438 դրամ արժողությամբ և անհատույց բաշխել շահառուներին և կազմակերպչական ծախսեր՝ 7,483,333 դրամ արժողությամբ, որից՝ 6,300,000 դրամը հաշվապահական հաշվառման ծառայության ծախս, իսկ 1,183,333 դրամը ինկասացիոն ծառայության ծախս:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Հիմնադրամը ՀՀ տարածքում 01.04.2023 թ. - 31.12.2024 թ. ընկած ժամանակահատվածում նախատեսում է ձեռք բերել հաշվապահական հաշվառման ծառայություն՝ 6,300,000 դրամ արժողությամբ և ինկասացիոն ծառայություն՝ 1,183,333 դրամ արժողությամբ:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	«Սիթի օֆ սմայլ» բարեգործական հիմնադրամը համագործակցում է Առողջապահության նախարարության Պրոֆ. Ռ. Օ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն ՓԲԸ-ի և Առողջապահության նախարարության հետ:

13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	1. Սույն ծրագրի նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է «Սիթի օֆ սմայլ» բարեգործական հիմնադրամի Հոգաբարձուների Խորհրդի կողմից: 2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետի համաձայն սահմանված տեղեկությունների ներկայացում լիազորված մարմնին: 3. Հիմնադրամն անցնում է տարեկան ֆինանսական աուդիտ, որի արդյունքները հրապարակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: 4. Յուրաքանչյուր եռամսյակ հիմնադրամի կայքում հրապարակվում է հիմնադրամի ծախսերի մանրամասն հաշվետվություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

18.04.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ